միեւնոյն ժամանակ՝ այդքան մռայլոտ է, եթէ նա կորցրել է երգելու եւ ուրախ լինելու ընդունակութիւնը, գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ ապրում է գետնի տակ, խուլ մթութեան մէջ:

— Ձեր գիւղացիք նոյնպէս գետնի տակ են ապրում, — նկատեցի ես, — բայց բաւական ուրախ են, բաւական պարզ սիրտ եւ լուսաւոր միտք ունեն:

— Այդ նկատողութիւնը ես էլ մի անգամ արեցի նրան: Նա պատասխանեց. դրսի կեանքը՝ ազատ եւ արձակ օդի մէջ՝ մեղմացնում է գետնափորի ազդեցութիւնը: Դուք, ասաց, տարոյայ մեծ մասը անց էք կացնում դաշտերում, լեռների վրայ եւ ձեր վրաններով՝ ձեր անասունների հետ՝ բնակւում էք ձեր արօտատեղիներում: Ազատ բնութիւնը ներշնչում է ձեր մէջ ազատ սիրտ եւ ազատ հոգի: Ձեր գետնափոր խրճիթները ձեզ համար ժամանակաւոր ձմեռանոցներ են միայն:

Անհամբերութիւնը ինձ այնքան տանջում էր, որ, չսպասելով մինչեւ առաւօտ, որ գնայի եւ անձամբ տեսնէի բոլորը, ես ցանկանում էի վարժապետի սենեակների, նրա նիստ ու կացի եւ առհասարակ նրա կենցաղավարութեան մասին կանխապէս տեղեկութիւն ստանալ քահանայից: Ցանկանում էի խօսել, մինչեւ լոյս խօսել իմ սրտին շատ մօտ երիտասարդի մասին եւ բնաւ չքնել:

— Լաւ՞ են սարքուած նրա սենեակները:

— Շատ լաւ են սարքուած. ամէն պատրաստութիւններ ունի նա. մահճակալ, անկողին, աթոռներ, գրասեղան եւ զանազան կարասիք: Պատերը զարդարած են պատկերներով. պատուհանները լի են գրքերով: Բայց մահճակալ ունի, նրա վրայ չի պառկում, մահիճ ունի, գործ չէ ածում: Պառկում է մերկ յատակի վրայ, առանց անկողնի: Զարմանալին այն է, որ շատ անգամ կողքերի տակին մանր խիճեր է ածում, որ աւելի ցաւեցնէ: Երբ հարցնում ես, վարժապետ, ինչո՞ւ ես մարմինդ տանջում, նա քեզ պատասխանում է. «ես այդ տանջանքով մարմինս ամրացնում եմ. դիցուք թէ, այնպէս պատահի, որ ստիպուած լինեմ մի քանի գիշեր սարերի մէջ մնալ. այնտեղ ով կը տայ ինձ մահիճ ու մահճակալ. պէտք է նախապէս սովորել առանց անկողնի, մերկ քարերի վրայ պառկելը»:

Ապա ինչո՞ւ համար է պատրաստել իր մահիճն ու մահճակալը, քանի որ գործ չէ ածում:

— Հիւրերի համար:

— Հիւրեր ունենո՞ւմ է: